

Տեղական ինքնակառավարման զարգացման գործիք

Գործիքն օգնում է ՏԻՄ-երին, համայնքների բնակիչներին և տեղական ինքնակառավարման այլ շահակիցներին.

- Բացահայտել ՏԻՄ-երի գործառնությունների և տեղական կարգավորիչների (ընթացակարգեր, քաղաքականություններ և այլն) իրականացման արդյունավետությունը, հնարավոր բացերն ու սահմանափակումները
- Բացահայտել տեղական ինքնակառավարման կարողությունների զարգացման հատուկ կարիքները, մշակել փոփոխությունների պլաններ և դրանց իրականացման համար հայցել կառավարության, դոնորների ու այլ շահակցների աջակցությունը, ինչպես նաև վերահսկել կարողությունների զարգացման ընթացքն ու արդյունքները
- Խթանել անհատների, քաղաքացիական հասարակության և մասնավոր հատվածի ներգրավումը տեղական ինքնակառավարման մեջ և
- տրամադրել օբյեկտիվ հաշվետվություն ՏԻՄ-երի ձեռքբերումների վերաբերյալ և դրանով իսկ զարգացնել հաշվետվողականության մշակույթը:

Գնահատող հանձնաժողովում՝ թվով մինչև 12 հոգի, պետք է ներառվեն համայնքի ղեկավարը, ավագանու անդամներ, վարչական ղեկավարներ, համայնքային ծառայողներ և այլ հայեցողական պաշտոններ զբաղեցնող անձինք, բնակչության ներկայացուցիչներ, օրնակ՝ հասարակական և մասնավոր կազմակերպությունների ներկայացուցիչներ, ուսուցիչներ, երիտասարդներ՝ կանայք և տղամարդիկ: Գնահատումն առաջարկվում է իրականացնել և հարցաթերթերը լրացնել նախ՝ անհատապես, այնուհետև՝ խմբովի: Անհատական գնահատումը կատարվում է հետևյալ քայլերով.

1. Կարդացե՛ք յուրաքանչյուր ոլորտի և ցուցանիշի նկարագրությունը:
2. Կարդացե՛ք յուրաքանչյուր սկզբունքի բացատրությունը և մտածեք, թե ինչպես է այն գործարկվում Ձեր համայնքում: Օգտագործեք Ձեր գիտելիքներն ու փորձը և գրանցե՛ք այդ սկզբունքի կիրառման վկայությունները:
3. Տվե՛ք յուրաքանչյուր հարցի պատասխանն ըստ 1) Չի մշակվել/չի իրականացվում, 2) Սկսնակ, 3) Զարգացող կամ 4) Փորձառու մակարդակների սանդղակի և Ձեր գնահատականը հիմնավորեք վկայություններով: Եղեք անկեղծ՝ համոզվեք, որ Ձեր միավորներն արտացոլում են իրականությունը:

Երբ գնահատման հանձնաժողովի բոլոր անդամները անհատապես լրացնեն գնահատման ձևը, խմբային գնահատման վարողը կգումարի նիստ, որի ընթացքում մասնակիցները կետ առ կետ կքննարկեն, կգրանցեն վկայությունները և կորոշեն վերջնական միավորները: Գնահատման այդ միավորներից են որոշվում ոլորտների ընդհանուր գնահատականները, իսկ արձանագրված վկայություններն ու առաջարկություններն օգտագործվում են կարողությունների զարգացում կամ բարեփոխություններ պլանավորելիս և հետագա գնահատումների ընթացքում:

Գործիքը ստեղծվել է «Հանրային մասնակցություն տեղական ինքնակառավարմանը» (ՀաՄաՏեղ) ծրագրի շրջանակում: Ծրագիրն իրականացնում է Համայնքների ֆինանսիստների միավորումը (ՀՖՄ)՝ Տեղեկատվական համակարգերի զարգացման և վերապատրաստման կենտրոնի (ՏՀԶԿԿ), Երևանի մամուլի ակումբի (ԵՄԱ), Ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբի, Եվրասիա համագործակցություն հիմնադրամի (ԵՀՀ) և Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոնի (ՀՌԿԿ) հետ համատեղ և ֆինանսավորվում է Միացյալ Նահանգների Միջազգային զարգացման գործակալության կողմից: Ծրագրի նպատակն է բարձրացնել հանրային մասնակցության աստիճանը ապակենտրոնացման և տեղական ինքնակառավարման բարեփոխումներում:

1. Մասնակցություն					
1.1. Բնակիչների մասնակցությունը որոշումների կայացմանը					
«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 11րդ հոդվածը համայնքի բնակիչների մասնակցությունը բնորոշում է որպես «համայնքում իրականացվող գործընթաց, որի միջոցով բնակիչները, առանց խտրականության, տեղեկացվում են ՏԻՄ-երի գործունեության մասին և կարող են... ներգործություն ունենալ ՏԻՄ-երի որոշումների վրա»:					
Դեռ չի մշակվել (1)	Մկնակ (2)	Զարգացող (3)	Փորձառու (4)	Միավորներ	
1.1Ա	Տեղական ինքնակառավարմանը համայնքի բնակիչների մասնակցության վերաբերյալ որևէ փաստաթուղթ դեռևս չի մշակվել:	Համայնքապետարանը մշակում է բնակիչների մասնակցության հայեցակարգը կամ մասնակցային քաղաքականության այլ փաստաթղթեր:	Մշակվել և հաստատվել է համայնքային որոշումների բնակիչների մասնակցության ընթացակարգը: Տեղի են ունեցել համապատասխան փաստաթղթերի հանրային քննարկումներ:	Գործող ընթացակարգը համայնքի համար նոր ռեսուրսների և ուժերի բացահայտման հնարավորություններ է ստեղծում:	
1.1Բ	Համայնքապետարանը չունի բաժին կամ աշխատակից, որն աշխատում է բնակիչների մասնակցության ոլորտում:	Գոյություն ունի հանրային կապերի բաժին կամ կան աշխատակից(ներ), որոնք համապատասխան վերապատրաստում չեն անցել:	Համայնքապետարանի առնվազն երկու աշխատակիցներ վերապատրաստվել և աշխատում են հանրային կապերի ոլորտում:	Համայնքապետարանի համապատասխան աշխատակիցներն ակտիվորեն աշխատում են բնակիչների և նախաձեռնող խմբերի հետ:	
1.1Գ	ՏԻՄ-երի աշխատակիցները չեն կարևորում բնակիչների մասնակցությունը: Օգտագործելով նույնիսկ մասնակցության բացերը, տեղական իշխանություններն առաջ են քաշում իրենց օրակարգերը:	Որոշ դեպքերում ՏԻՄ-երը բնակիչների կարծիքը հաշվի են առնում որոշումներ կայացնելիս: Մասնակցությունը դիտարկվում է որպես համայնքի անդամների հմտությունների և գիտելիքների արդյունավետ օգտագործման միջոց ու կարևոր գործոն՝ տեղական խնդիրների լուծման համար:	Բնակիչները կանոնավոր կերպով տեղեկացվում են ՏԻՄ-երի գործունեության բոլոր իրադարձությունների վերաբերյալ: Հնարավորությունները վերլուծելով, ՏԻՄ-երն օգտագործում են սոցիալական մեդիաներ, առցանց հարթակներ, համապատասխան այլ միջոցներ ու մասնակցության այլ ձևեր: Համայնքում գործող նախաձեռնող խմբերում ներգրավվելով՝ մարդիկ դրսևորում են մասնակցային վերաբերմունք և պատասխանատվություն՝ հանրային	Քաղաքացիներն ակտիվորեն մասնակցում են որոշումների կայացմանը: Մասնակցության տարբեր ձևեր զարգացնելով, ՏԻՄ-երը բնակիչներից հավաքում են գաղափարներ և առաջարկություններ՝ տեղական խնդիրներին ավելի նպաստավոր լուծում տալու նպատակով:	
• Օրինակներ	<ul style="list-style-type: none"> • Բնակիչների զգալի մասը տեղեկություն չունի ՏԻՄ-երի գործունեության վերաբերյալ: • Բնակիչները (գրեթե) չեն մասնակցում տեղական ինքնակառավարման որոշումների կայացմանը: 	<ul style="list-style-type: none"> • Բնակիչների զգալի մասը (օրինակ՝ կեսից ավելին) հետաքրքրված չէ և չի մասնակցում որոշումների կայացման գործընթացին: • Պարբերաբար արձանագրվում են հանրային սեփականության վնասման և վանդալիզմի դեպքեր: 	<ul style="list-style-type: none"> • Բնակիչները հետաքրքրությամբ են հետևում ավագանու նիստերին և խնդիրների քննարկման առաջարկություններ են անում: • Համայնքում գործում են տեղական խնդիրների լուծման համար ստեղծված նախաձեռնող խմբեր: 	<ul style="list-style-type: none"> • Համայնքում գործում են նախաձեռնող խմբեր, որոնք տեղական խնդիրների լուծումներ են առաջարկում: • ՀԿ-ների ներկայացուցիչների և լրագրողների թիմերը մշտադիտարկում են ՏԻՄ-երի աշխատանքը: • Բնակիչները հետաքրքրությամբ են հետևում ավագանու հեռարձակվող նիստերին: 	
• Վկայություններ					
					• Առաջարկություններ, նշումներ

1.2. Հետադարձ կապ բնակիչների հետ					
Հետադարձ կապն անհրաժեշտ է քաղաքականությունների ու զարգացման ծրագրերի մշակման բոլոր փուլերում և առկա համակարգերի բարելավման ընթացքում: Ջարգացնելով բաց կառավարման գործելակերպը, այն ՏԻՄ-երին օգնում է չափել իրենց կատարողականը, թափանցիկ և հաշվետու լինել բնակիչների առջև, քննարկել տեղական խնդիրներն ու միջոցներ ձեռնարկել դրանց լուծման համար, ինչպես նաև բարելավել հանրային ծառայությունները՝ բնակիչներին ներգրավելով ծառայությունների որակի կառավարման մեջ: Հետադարձ կապի անտեսումը կարող է լուրջ վերամշակման և ծախսատար վերափոխումների կարիք ստեղծել:					
Դեռ չի մշակվել (1)	Մկնակ (2)	Զարգացող (3)	Փորձառու (4)	Միավորներ	
1.2Ա	Քաղաքացիների հետ հետադարձ կապի համակարգ չի ստեղծվել:	Հետադարձ կապի հայեցակարգը մշակման փուլում է:	Մշակվել և հաստատվել է հետադարձ կապի հայեցակարգը, հետադարձ կապի մեխանիզմը գործում է:	Հետադարձ կապի միջոցները անընդհատ բարելավվում են, ինչի շնորհիվ բնակիչներին ավելի ակտիվորեն են ներգրավվում հայեցակարգերի, քաղաքականությունների, զարգացման ծրագրերի մշակման և առկա համակարգերի բարելավման բոլոր փուլերում:	
1.2Բ	Համայնքապետարանը չունի բաժին կամ աշխատակից, որը տեղեկացնում և աշխատում է բնակիչների հետ:	Համայնքապետարանի ունի հանրային կապերի բաժին կամ աշխատակից, որոնք համապատասխան վերապատրաստում չեն անցել:	Համայնքապետարանի վերապատրաստված աշխատակիցներն ապահովում են հետադարձ կապը քաղաքացիների հետ՝ նաև առցանց հաղորդակցելով:	Համայնքապետարանի համապատասխան աշխատակիցներն ակտիվորեն աշխատում են բնակիչների և նախաձեռնող խմբերի հետ: Գործում են հետադարձ կապի մեխանիզմներ՝ ՏԻՄ-երի որոշումների կայացման գործընթացի բոլոր փուլերում:	
1.2Գ	ՏԻՄ-երի աշխատակիցները չեն կարևորում բնակիչների արձագանքը:	Որոշ դեպքերում ՏԻՄ-երը բնակիչների կարծիքը հաշվի են առնում որոշումները կայացման, ծրագրերի և հայեցակարգերի մշակման ընթացքում:	Տեղեկացված բնակիչները կանոնավոր կերպով առձագանքում են ՏԻՄ-երի որոշումների, հայեցակարգերի օրինագծերին ու զարգացման ծրագրերի նախնական տարբերակներին: Այդ արձագանքն արձանգրվում և ընթացք է ստանում:	Քաղաքացիներն ակտիվորեն մասնակցում են որոշումների կայացմանը: Համայնքապետարանը պարբերաբար հարցումներ է անցկացնում, բնակիչներից հավաքելով գաղափարներ և առաջարկություններ՝ տեղական խնդիրներին ավելի արդյունավետ լուծում տալու համար: Բնակիչների հետ ՏԻՄ-երի մշտական երկխոսությունը ձևավորում է հանրային վստահություն և լիարժեք վերահսկողության մեխանիզմներ:	
• Օրինակներ	<ul style="list-style-type: none"> • Բնակիչների զգալի մասը տեղեկություն չունի ՏԻՄ-երի գործունեության վերաբերյալ: • Առկա միջոցները բավարար չեն հետադարձ կապ ապահովելու համար: 	<ul style="list-style-type: none"> • Համայնքապետարանի շենքում տեղադրված է առաջարկությունների փոստարկղ: 	<ul style="list-style-type: none"> • Համայնքում գործող նախաձեռնող խմբերում ներգրավվելով՝ մարդիկ դրսևորում են մասնակցային վերաբերմունք: 	<ul style="list-style-type: none"> • Համայնքում գործում են նախաձեռնող խմբեր, որոնք տեղական խնդիրների լուծումներ են առաջարկում: • ՀԿ-ների ներկայացուցիչների և լրագրողների թիմերը մշտադիտարկում են ՏԻՄ-երի աշխատանքը: • Տեղական լրատվամիջոցները հետաքրքրվում են ավագանու նիստերը, որոնց բնակիչները հետևում են մեծ հետաքրքրությամբ: 	
• Վկայություններ					
					• Առաջարկություններ, նշումներ

1.3. Կամավորություն, աշխատանք երիտասարդության հետ					
Կամավորությունը համայնքային զարգացման կարևոր գործոններից է: Աշխատելով անվարձահատույց հաճախ ամենադժվար հանգամանքներում, կամավորները նպաստում են բնակիչների մասնակցությանը որոշումների կայացման գործընթացում, խթանում են սոցիալական փոփոխությունները և աջակցում իրենց համայնքների առավել խոցելի մարդկանց:					
Դեռ չի մշակվել (1)	Մկնակ (2)	Զարգացող (3)	Փորձառու (4)	Միավորներ	
1.3Ա	Կամավորների և երիտասարդության հետ աշխատանքի հայեցակարգ/ քաղաքականություն չի մշակվել:	Կամավորների և երիտասարդության հետ աշխատանքի հայեցակարգը մշակվում է:	Մշակվել և հաստատվել են կամավորության զարգացման և երիտասարդության հետ աշխատանքի հայեցակարգեր: Կամավորությունը նշանակալի դեր է հատկացված համայնքի զարգացման ծրագրերում:	Կամավորության զարգացման ծրագիրն արդյունավետ է: Երիտասարդության զարգացման քաղաքականությունը համապատասխանում է երիտասարդության պոզիտիվ զարգացման (ԵՊՁ) միջազգային ստանդարտներին:	
1.3Բ	Համայնքապետարանը չունի բաժին կամ աշխատակիցներ, որոնք աշխատում են կամավորների և երիտասարդության հետ:	Համայնքապետարանն ունի երիտասարդության և կամավորների հետ աշխատանքի պատասխանատու, որը համապատասխան վերապատրաստում չի անցել:	Առնվազն երկու աշխատակիցներ վերապատրաստվել և աշխատում են երիտասարդության և կամավորների հետ: Նրանք վարում են կամավորների գրանցման մատյան:	ՏԻՄ-երն ակտիվորեն աշխատում են կամավորների հետ: Հատուկ ուշադրություն է դարձվում երիտասարդության զարգացմանը: Իրականացվում են դասընթացներ վերաբերյալ: Կամավորների առցանց գրանցման տվյալների բազան պարբերաբար թարմացվում է:	
1.3Գ	ՏԻՄ-երի աշխատակիցները չեն կարևորում կամավորությունը:	Որոշ դեպքերում ՏԻՄ-երը ներգրավվում են կամավորների և երբեմն երիտասարդների համար միջոցառումներ են կազմակերպում, բայց այդ գործողությունները նպատակաուղղված չեն ու կանոնավոր բնույթ չեն կրում:	Երիտասարդությունը մասնակցում է որոշումների կայացմանը և ներգրավված է համայնքի զարգացման որոշ ծրագրերում: Գործում է երիտասարդական խորհուրդը: Կամավորների թիվը հետզհետե ավելանում է:	Կամավորների աշխատանքը տեսանելի և գնահատված է համայնքում: Երիտասարդներն ակտիվորեն են մասնակցում որոշումների կայացմանը: Երիտասարդական նախաձեռնող խմբերն իրականացնում են տեղական խնդիրների լուծման գործընթացներ և նախաձեռնում համայնքային զարգացման ծրագրեր:	
• Օրինակներ	<ul style="list-style-type: none"> • ՏԻՄ-երի կազմակերպված միջոցառումներում երբեմն կամավորներ են ներգրավվում: • Երիտասարդների օգնությամբ կազմակերպվել են սպորտային միջոցառումներ, համերգներ: 	<ul style="list-style-type: none"> • Կամավորները պարբերաբար միջոցառումներ են նախաձեռնում և իրականացնում: • Երիտասարդները հանդես են գալիս նախաձեռնություններով, նրանց ձայնը լսելի է համայնքում: 	<ul style="list-style-type: none"> • Ավագանու երիտասարդ անդամները հայտնի են իրենց գործերով: Նրանք համայնքի երիտասարդությանը օրինակ են ծառայում: • Կամավորների նախաձեռնող խմբերն իրենց գործերով տեսանելի են համայնքում: • ՏԻՄ-երի հետ համագործակցության արդյունքում երիտասարդները նոր հմտություններ են զարգացում, ստեղծում են առողջ հարաբերություններ և կապեր: 		
• Վկայություններ					
				• Առաջարկություններ, նշումներ	

2. Ներառականություն					
2.1. Իրավահավասարություն՝ պայքար խտրականության դեմ					
Հավասարության և խտրականության բացառման սկզբունքներն օրենքի գերակայության հիմքերից են: Բոլոր մարդիկ ծնվում են ազատ ու հավասար՝ իրենց արժանապատվությամբ և իրավունքներով: Ըստ ՀՀ Սահմանադրության 14.1 հոդվածի, անձի կամ անձանց խմբի հատկանիշները, որոնց հիմքով կարող է դրսևորվել խտրական վերաբերմունքը, ներառում են սեռը, ռասան, մաշկի գույնը, էթնիկական կամ սոցիալական ծագումը, գենետիկական հատկանիշները, լեզուն, կրոնը և այլն:					
	Դեռ չի մշակվել (1)	Մկանակ (2)	Զարգացող (3)	Փորձառու (4)	Միավորներ
2.1Ա	Խտրականության դեմ պայքարի հայեցակարգ դեռևս չի մշակվել:	Խտրականության դեմ պայքարի հայեցակարգը մշակվում է:	Մշակվել և հաստատվել են խտրականության դեմ պայքարի քաղաքականությունը:	Խտրականության բացառման քաղաքականությունը պարբերաբար քննարկվում և վերանայվում է:	
2.1Բ	Համայնքապետարանում խտրականության բացառումը չի վերահսկում:	Վերահսկող հանձնաժողովը գործում է, բայց ավագանին և համայնքապետարանի աշխատակիցները իրավահավասարության նորմերի և խտրականության բացառման վերաբերյալ դասընթացներ չեն անցել:	Համայնքապետարանի աշխատակիցները և ավագանու որոշ անդամներ պարբերաբար անցնում են իրավահավասարության նորմերի և խտրականության բացառման դասընթացներ:	Համայնքապետարանի աշխատակիցները և ավագանու անդամներն՝ ըստ վերապատրաստման պլանի մասնակցում են իրավահավասարության նորմերի և խտրականության դեմ պայքարի վերաբերյալ խորացված դասընթացների և փորձի փոխանակման միջոցառումների:	
2.1Գ	Խտրականության դեմ պայքարը համայնքապետարանն առաջնահերթ խնդիր չի համարում:	Կարևորելով խտրականության դեմ պայքարը, ՏԻՄ-երն այդ ուղղությամբ միջոցներ են ձեռնարկում:	Վերստուգիչ մարմինը վերահսկում է խտրականության բացառումը: Ձևավորվել և գործում են ՏԻՄ-երի մշտադիտարկման քաղաքացիների կամ տեղական չԿ-ների խմբեր:	Վերստուգիչ մարմինը և քաղաքացիական մշտադիտարկման խմբերը վերահսկում և ուղղորդում են խտրականության արգելքը: Ձևավորվել է խտրականության բացառման մշակույթ:	
• Օրինակներ	<ul style="list-style-type: none"> • Համայնքապետարանում պարբերաբար գրանցվում են աշխատակիցների հանդեպ խտրական վերաբերմունքի դեպքեր: • Համայնքապետարանում աշխատող կանանց մասնաբաժինը 30%-ից ցածր է, հաշմանդամություն ունեցող անձինք, երիտասարդներ, ազգային կամ այլ փոքրամասնությունների ներկայացուցիչներ չկան: 	<ul style="list-style-type: none"> • Համայնքապետարանում աշխատող կանանց թիվը գերազանցում է 30%-ը: • Համայնքապետարանում աշխատում են հաշմանդամություն ունեցող անձինք: • Համայնքապետարանն ունի երիտասարդ անձինք աշխատակիցներ: 	<ul style="list-style-type: none"> • Համայնքի իրազեկված աշխատակազմը պահպանում է խտրականության բացառման կանոնները: • Վերստուգիչ մարմինը վերահսկում է խտրականության դեմ պայքարը: • Համայնքապետարանում աշխատող կանանց և տղամարդկանց թիվը հավասարակշռված է: • Պարբերաբար անցկացվում է խտրականության բացառման կանոնների և գործողությունների գնահատում: 	<ul style="list-style-type: none"> • Համայնքապետարանում խտրականության դրսևորման դեպքեր չեն արձանագրվել: • Համայնքապետարանի ղեկավար անձնակազմում և ավագանու մեջ ներգրավված են կանայք, երիտասարդներ, հաշմանդամություն ունեցող անձինք, ազգային և այլ փոքրամասնությունների ներկայացուցիչներ: 	
• Վկայություններ					
					• Առաջարկություններ, նշումներ

2.2. Հաշմանդամություն ունեցող անձանց ներգրավում					
Հաշմանդամություն ունեցող անձանց մտահոգությունները պետք է հաշվի առնվեն այլ մարդկանց մտահոգությունների հետ միասին, համայնքային զարգացման ծրագրերում՝ քաղաքական, տնտեսական և սոցիալական ոլորտներում: Մինչև ներառման գործընթացի սկիզբը, անհրաժեշտ է համապատասխան հետազոտություն կատարել և հատկացնել անհրաժեշտ ռեսուրսներ: Ինտեգրումը պահանջում է հաշմանդամություն ունեցող անձանց ներառումը՝ նրանց ներկայությունը որոշումների կայացման բոլոր մակարդակներում: Ինտեգրումը չի փոխարինում մասնագիտացված ծրագրերի և հատուկ գործողությունների պարտադրող քաղաքականության կարիքը:					
Դեռ չի մշակվել (1)	Մկնակ (2)	Զարգացող (3)	Փորձառու (4)	Միավորներ	
2.2Ա	Հաշմանդամություն ունեցող անձանց ներգրավման քաղաքականությունը դեռևս չի մշակվել:	Հաշմանդամություն ունեցող անձանց ներգրավման հայեցակարգը և համապատասխան ընթացակարգերը մշակման ընթացքում են:	Մշակվել և հաստատվել են հաշմանդամություն ունեցող անձանց ներգրավման քաղաքականությունը:	Հաշմանդամություն ունեցող անձանց ներգրավման քաղաքականությունը գործում է, իրականացվում են հարմարեցման և մատչելիության ապահովման աշխատանքներ:	
2.2Բ	Համայնքապետարանը չունի հաշմանդամություն ունեցող անձանց ներգրավման խնդիրներով զբաղվող բաժին կամ պատասխանատու անձ:	Համայնքապետարանն ունի ներառականության խնդիրներով զբաղվող բաժին կամ պատասխանատու՝ առանց համապատասխան վերապատրաստման: Հանրային ծառայությունները որոշ չափով մատչելի են հաշմանդամություն ունեցող անձանց համար: Պլանավորված են շենքերի մատչելիությունն ապահովման աշխատանքներ:	Հաշմանդամություն ունեցող աշխատակիցների համար համայնքապետարանում իրականացվել են ողջամիտ հարմարեցումներ: Աշխատանքներ են տարվում շենքերի մատչելիությունն ապահովելու համար:	Համայնքապետարանի աշխատակիցները և ավագանու որոշ անդամներ վերապատրաստվել և մասնակցում են փորձի փոխանակման միջոցառումների: Նրանք համագործակցում են ազգային հանձնաժողովի, համապատասխան պետական այլ կառույցների և այլ համայնքապետարանների մասնագետների հետ:	
2.2Գ	Համայնքապետարանում խտրականության բացառումը չի վերահսկում:	Վերահսկող հանձնաժողովը գործում է, բայց ավագանու անդամները և համայնքապետարանի համապատասխան աշխատակիցները իրավահավասարության նորմերի և խտրականության բացառման վերաբերյալ դասընթացներ չեն անցել:	Համայնքապետարանի շենքը և հանրային ծառայությունները մատչելի են հաշմանդամություն ունեցող անձանց համար: Համայնքապետարանի աշխատակիցները և ավագանու որոշ անդամներ պարբերաբար անցել են իրավահավասարության նորմերի և խտրականության բացառման դասընթացներ:	Հանրային շինությունները հասանելի են հաշմանդամություն ունեցող անձանց համար, յուրաքանչյուր նոր կառույց նախագծելիս հաշվի են առնվում մատչելիության ստանդարտները: Համայնքում իրականացվում է հաշմանդամություն ունեցող անձանց ինտեգրման քաղաքականություն և գործողությունների պլան, որը մշտադիտարկվում և պարբերաբար լրամշակվում է: Ձևավորվել է խտրականության բացառման մշակույթ:	
• Օրինակներ	• Խտրականության դեմ պայքարը համայնքապետարանն առաջնահերթ խնդիր չի համարում:	• Համայնքապետարանում իրականացվել է խտրականության բացառման գործող կանոնների և գործողությունների գնահատում:	• Վերստուգիչ մարմինը վերահսկում է խտրականության բացառումը: • Գործում են ՏԻՄ-երի մշտադիտարկման քաղաքացիների/ տեղական ՀԿ-ների խմբեր:	• Վերստուգիչ մարմինը և մշտադիտարկման խմբերը վերահսկում և ուղղորդում են խտրականության բացառումը: • Համայնքապետարանի խտրականության բացառման փորձը օրինակ է ծառայում այլ համայնքապետարանների համար:	
• Վկայություններ					• Առաջարկություններ, նշումներ

2	2.3. Գենդերային հավասարություն Կանայք և տղամարդիկ հավասարապես պետք է ներգրավված լինեն որոշումների կայացման բոլոր մակարդակներում, որպեսզի նրանց կարիքներն ու առաջնահերթությունները արտացոլվեն քաղաքականության, ծառայությունների մատուցման, ճանապարհների, տրանսպորտի, ջրամատակարարման, սանիտարական, թափոնների կառավարման, բնապահպանական կառավարման, խաղաղության և անվտանգության, ֆինանսական կառավարման, հարկաբյուջետային քաղաքականության, սոցիալ-տնտեսական զարգացման և հանգստի ոլորտներում: ՏԻՄ-երը մեծ դեր և պատասխանատվություն ունեն բոլոր բնակիչների համար իրավահավասարության և հավասար հնարավորությունների ապահովման գործում:				
	Դեռ չի մշակվել (1)	Մկնակ (2)	Զարգացող (3)	Փորձառու (4)	Միավորներ
2.3Ա	Համայնքում իրականացվող քաղաքականությունները անտեսում են գենդերային իրավահավասարության հարցերը:	Գենդերային իրավահավասարության հայեցակարգը և համապատասխան ընթացակարգերը մշակման ընթացքում են:	Ընդունվել է որոշում և հաստատվել ընթացակարգ՝ գենդերային իրավահավասարության նորմերի վերաբերյալ: Տեղի են ունեցել այդ փաստաթղթերի հանրային քննարկումներ:	Խտրականության բացառման, մասնավորապես՝ գենդերային քաղաքականությունն արդյունավետ է: Վկայությունների վրա հիմնված գործողությունների պլանը պարբերաբար լրամշակվում է ընթացքի, արդյունքների և փոփոխվող իրականության վերլուծության հիման վրա:	
2.3Բ	Համայնքապետարանը չունի աշխատակից, որը զբաղվում է գենդերային իրավահավասարության հարցերով:	Համայնքապետարանն ունի գենդերային իրավահավասարության հարցերով կամ ներառականությամբ զբաղվող աշխատակից, բայց կանայք համարժեքորեն չեն ներկայացված ավագ պաշտոններում և համայնքային ծառայության մեջ:	Համայնքապետարանի աշխատակիցներն անցել են գենդերային զգայունության դասընթացներ վերջին տարվա ընթացքում: Ավագանու անդամների առնվազն 30% կանայք են, կանայք համարյա համարժեքորեն են ներկայացված համայնքային ծառայության մեջ և ՏԻՄ-երի ավագ պաշտոններում:	Համայնքապետարանն ունի իրավահավասարության՝ այդ թվում նաև գենդերային հարցերով զբաղվող թիմ, որի անդամները վերապատրաստվում են ամեն տարի: Ավագանու անդամների կեսը կամ կեսից ավելին կանայք են: Կանայք համարժեքորեն են ներկայացված ՏԻՄ-երի ավագ պաշտոններում և համայնքային ծառայության մեջ:	
2.3Գ	ՏԻՄ-երի աշխատակիցները չեն կարևորում գենդերային իրավահավասարությունը:	ՏԻՄ-երը սկսել են իրականացնել գենդերային զգայուն բյուջետավորում:	ՏԻՄ-երն իրականացնում են գենդերային զգայուն բյուջետավորում, որը խթանում է կանանց մասնակցությունը համայնքի տնտեսական, սոցիալական և քաղաքական կյանքին:	ՏԻՄ-երն իրականացնում են գենդերային զգայուն բյուջետավորում, որը խթանում է կանանց մասնակցությունը համայնքի տնտեսական, սոցիալական և քաղաքական կյանքին:	
<ul style="list-style-type: none"> Օրինակներ 	<ul style="list-style-type: none"> Համայնքապետարանի աշխատակիցների կազմում կանանց տոկոսը 20-ից պակաս է: 	<ul style="list-style-type: none"> Խտրականության բացառման ընթացակարգը պարունակում է որոշ տարրեր գենդերային իրավահավասարության վերաբերյալ: 	<ul style="list-style-type: none"> Համայնքապետարանի աշխատակիցները մասնակցել են դասընթացների՝ մարդու իրավունքների, իրավահավասարության նորմերի և խտրականության բացառման վերաբերյալ: Աշխատակազմում կանանց տոկոսը հասնում է 50-ի: Կանայք ներգրավված են համայնքապետարանի ղեկավար անձնակազմում և ավագանու մեջ: 	<ul style="list-style-type: none"> ՏԻՄ-երը գնահատել են գենդերային և սոցիալական խմբերի առանձնահատկությունները և հատուկ գործողություններ մշակել՝ լուծելու առկա բացերը: ՏԻՄ-երն ակտիվորեն համագործակցում են համայնքում գործող աղքատամետ և գենդերային առումով զգայուն հասարակական կազմակերպություններ: Կին ղեկավարները և ավագանու անդամներն հայտնի են և օրինակ են ծառայում իրենց գործերով: 	
<ul style="list-style-type: none"> Վկայություններ 					<ul style="list-style-type: none"> Առաջարկություններ, նշումներ

3. Թափանցիկություն				
3.1. ՏԻՄ-երի տեղեկատվության հասանելիությունը				
Թափանցիկությունը ՏԻՄ-երի հանդեպ հասարակության վստահության ապահովման հիմնական գործոններից է: Այն ենթադրում է ՏԻՄ-երի և նրանց ներկայացուցիչների բոլոր գործողությունների հրապարակայնությունը՝ բնակչությանը համապատասխան տեղեկատվության տրամադրումով՝ ամբողջական, ժամանակին և մատչելի եղանակով (օրինակ՝ առցանց): Թափանցիկության մյուս չափանիշներն են՝ տեղեկատվության մատչելիությունը, համապատասխան ձևաչափը, հասկանալիությունը, հուսալիությունը և որակը:				
Դեռ չի մշակվել (1)	Մկնակ (2)	Զարգացող (3)	Փորձառու (4)	Միավորներ
3.1Ա	Թափանցիկության ապահովման ընթացակարգ դեռևս չի մշակվել:	Թափանցիկության ապահովման ընթացակարգը և համապատասխան այլ փաստաթղթերը մշակման փուլում են:	Թափանցիկության ապահովման կանոնները մշակվել և հաստատվել են: Ընթացակարգի հանրային քննարկում է անցկացվել:	Գործող ընթացակարգը ամրապնդում է բնակիչների վստահությունը ՏԻՄ-երի և նրանց ներկայացուցիչների հանդեպ:
3.1Բ	Համայնքապետարանը չունի բաժին կամ աշխատակից, որը տեղեկացնում և աշխատում է բնակչության հետ:	Գոյություն ունի հանրային կապերի բաժին կամ կան աշխատակից(ներ), որոնք թափանցիկության վերաբերյալ դասընթացներ չեն անցել:	Համայնքապետարանի առնվազն երկու աշխատակիցներ վերապատրաստվել և աշխատում են հանրային կապերի ոլորտում: Կա(ն) համայնքի համացանցային կայքը սպասարկող մասնագետ(ներ):	Համայնքապետարանի կոմպետենտ աշխատակիցներն ակտիվորեն աշխատում են բնակիչների և նախաձեռնող խմբերի հետ՝ տրամադրվող տեղեկատվության մատչելիության, որակի բարելավման և թափանցիկության հետ առնչվող այլ հարցերի լուծման շուրջ:
3.1Գ	ՏԻՄ-երի աշխատակիցները չեն կարևորում թափանցիկությունը:	ՏԻՄ-երը բնակիչների համար որոշ կարևոր հայտարարություններ են տեղադրում հայտարարությունների տախտակի վրա կամ առցանց:	Գործում է համայնքի կայքը և բնակիչները կանոնավոր կերպով տեղեկացվում են ՏԻՄ-երի գործունեության և որոշումների կայացման հետ կապված բոլոր իրադարձությունների վերաբերյալ:	ՏԻՄ-երի գործունեության և որոշումների կայացման հետ կապված բոլոր իրադարձությունների վերաբերյալ տեղեկատվությունը մատչելի, հասկանալի և հուսալի է:
• Օրինակներ	<ul style="list-style-type: none"> • Բնակիչների զգալի մասը տեղեկություն չունի ՏԻՄ-երի գործունեության վերաբերյալ: • Բնակիչները ստանում են որոշ տեղեկություններ ՏԻՄ-երի գործունեության վերաբերյալ՝ հայտարարությունների տախտակից կամ լրատվամիջոցներից: 	<ul style="list-style-type: none"> • Համայնքապետը և ավագանու անդամները պարբերաբար հանդիպում են տեղեկություններ հայցող բնակիչների և կազմակերպությունների հետ: • Համայնքապետարանը պատասխանում է բնակիչների, ՀԿ-ների և լրատվամիջոցների նամակներին՝ սահմանված կարգով: • Ավագանու նիստերը հեռարձակվում են առցանց: 	<ul style="list-style-type: none"> • ՀԿ-ների ներկայացուցիչների և լրագրողների թիմերը մշտադիտարկում են ՏԻՄ-երի աշխատանքը: • Համայնքի կայքը ամեն օր կանոնավոր կերպով թարմացվում է: Այն պարունակում է ավագանու բոլոր նիստերի և կարևոր այլ միջոցառումների տեսագրությունները: 	
• Վկայություններ				
				• Առաջարկություններ, նշումներ

3.2. Մշտադիտարկում Համայնքապետարանները պետք է կոմպետենտ աշխատակիցներ և համարժեք այլ ռեսուրսներ ունենան մատուցվող ծառայությունների մշտադիտարկման և գնահատման համար: Այս գործընթացն ավելի արդյունավետ է երբ գործում են հանրային վերահսկողության մեխանիզմները և երբ այն իրականացվում է լրատվամիջոցների մասնակցությամբ:				
Դեռ չի մշակվել (1)	Մկսնակ (2)	Զարգացող (3)	Փորձառու (4)	Միավորներ
3.2Ա	Մշտադիտարկման հայեցակարգեր չեն մշակվել:	Մշտադիտարկման ընթացակարգը և համապատասխան այլ փաստաթղթերը մշակման փուլում են:	Մշտադիտարկման կանոնները մշակվել և հաստատվել են: Ընթացակարգի հանրային քննարկում է անցկացվել: Համայնքապետարանը փոխըմբռնման հուշագրեր է կնքել մշտադիտարկող ՀԿ-ների հետ:	Մշտադիտարկման կանոնները պարբերաբար լրամշակվում են: Համայնքապետարանը փոխըմբռնման հուշագրեր է կնքել մշտադիտարկող ՀԿ-ների և լրատվամիջոցների հետ:
3.2Բ	Համայնքապետարանը չունի մշտադիտարկման մասնագետ:	Համայնքապետարանի մշտադիտարկման պատասխանատու(ներ), որոնք համապատասխան դասընթացներ չեն անցել:	Համայնքապետարանի մշտադիտարկման պատասխանատուները վերապատրաստվել և համագործակցում են մշտադիտարկման խմբերի հետ:	Համայնքապետարանի կոմպետենտ աշխատակիցներն ակտիվորեն աշխատում են հանրային ծառայությունների մատչելիության և որակի ապահովման ուղղությամբ:
3.2Գ	Մշտադիտարկման մեխանիզմներ չեն գործում:	Համայնքապետարանը խրախուսում է մշտադիտարկումը տեղական ՀԿ-ների կամ քաղաքացիական նախաձեռնող խմբերի կողմից: Պատասխանատու անձինք պարբերաբար հանդիպում են մշտադիտարկողների հետ:	Պատասխանատու անձինք կանոնավոր հանդիպումներ են ունենում մշտադիտարկողների հետ: Ծառայությունների որակի կառավարումն իրականացվում է նաև համակարգը ներառում է համայնքի համացանցային կայքի միջոցով: Գործում է արտակարգ իրավիճակների վաղ նախագուշացման մեխանիզմ:	Մշտադիտարկման գործող համակարգը զգալիորեն բարելավել է մատուցվող ծառայությունների որակը և ամրապնդել բնակիչների վստահությունը ՏԻՄ-երի հանդեպ: Համայնքապետարանն ակտիվորեն խրախուսում է ծառայությունների վերաբերյալ բնակիչների կարծիքը և բարելավման առաջարկությունները:
Օրինակներ	<ul style="list-style-type: none"> Մշտադիտարկումը չի կարևորվում: Մշտադիտարկման համար չկան համապատասխան միջոցներ: 	<ul style="list-style-type: none"> Համայնքում գործում է մշտադիտարկման մեկ կամ երկու խումբ: 	<ul style="list-style-type: none"> Համայնքի կայքում կան հատուկ էջեր, որտեղ գրանցվում է բնակիչների կարծիքը ծառայությունների վերաբերյալ: 	<ul style="list-style-type: none"> Մշտադիտարկող խմբերը հրապարակում են իրենց աշխատանքի մասին տարեկան հաշվետվություններ: Բնակիչների լավագույն առաջարկությունների համար սահմանված են մրցանակներ:
Վկայություններ				
				Առաջարկություններ, նշումներ

3.3. Կադրային քաղաքականություն					
Տեղական ինքնակառավարումը համայնքի տնտեսական աճի, սոցիալական առաջընթացի և ընդհանուր զարգացման հիմնական որոշիչն է: Լավ կառավարման հասարակության պահանջը ՏԻՄ-երին խրախուսում է թափանցիկ և հաշվետու լինել ոչ միայն բնակչության առջև, այլև ներքին թափանցիկություն և հաշվետվողականություն կիրառել իրենց ղեկավարած կառույցներում:					
	Դեռ չի մշակվել (1)	Մկսնակ (2)	Զարգացող (3)	Փորձառու (4)	Միավորներ
3.3Ա	Կադրային քաղաքականություն դեռևս չի մշակվել:	Կադրային քաղաքականությունը մշակվում է:	Ընդունվել են ընթացակարգեր և այլ փաստաթղթեր կադրային քաղաքականության վերաբերյալ:	Համայնքապետարանն ունի կադրային քաղաքականություն և իրականացնում է կադրերի զարգացման ռազմավարություն:	
3.3Բ	Համայնքապետարանը չունի կադրերի բաժին կամ պատասխանատու:	Համայնքապետարանն ունի կադրերի բաժին կամ աշխատակիցներ, բայց նրանք համապատասխան դասընթացներ չեն անցել:	Համայնքապետարանի կադրերի բաժնի աշխատակից(ներ)ը վերապատրաստվել և նրա(նց) աշխատանքն արդյունավետ է:	Համայնքապետարանի կադրերի բաժին կոմպետենտ աշխատակիցներն ակտիվորեն աշխատում են զարգացնելով համայնքապետարանի մարդկային ներուժը: Կազմակերպական փոփոխությունները պլանավորվում և իրականացվում են արդյունավետորեն:	
3.3Գ	Աշխատանքի հայտարարությունները հազվադեպ են տրվում:	Որոշ բայց ոչ բոլոր աշխատակիցներն ունեն իրենց աշխատանքը նկարագրող փաստաթղթեր: Կատարողականի տարեկան գնահատումն իրականացվում է ոչ բոլոր աշխատակիցների համար:	Կազմված են աշխատանքի նկարագրություններ բոլոր պաշտոնների համար: Նոր աշխատակիցների համար կազմակերպվում են ներածական դասընթացներ: Աշխատակիցները մասնակցում են դասընթացների՝ վերապատրաստման անհատական պլանների համաձայն: Աշխատակիցների կատարողականը գնահատվում է սահմանված ընթացակարգով:	Համայնքապետարանի աշխատակիցների վերապատրաստման պլանները լրամշակվում են նրանց կատարողականի տարեկան և միջանկյալ՝ կիսամյակային գնահատումների և աշխատանքային պլանների հիման վրա: Աշխատակիցները մասնակցում են կադրային փոփոխությունների ռազմավարության մշակմանը և արդյունքների գնահատմանը:	
Օրինակներ	<ul style="list-style-type: none"> • Աշխատանքի հայտարարություններ տալու հարկ չկա, քանի որ համայնքում բոլորը միմյանց ճանաչում են: • Տարածված կարծիք կա, որ ՏԻՄ-երի ենթակայության տակ գտնվող կառույցներում աշխատանք գտնելը շատ դժվար է նույնիսկ լավ մասնագետների համար: 	<ul style="list-style-type: none"> • Համայնքապետարանը երբեմն թափուր աշխատատեղերի հայտարարություններ է տալիս: • Դիմորդների հետ երբեմն հարցազրույցներ են անցկացվում: 	<ul style="list-style-type: none"> • Բոլոր թափուր աշխատատեղերի հայտարարությունները առկա են համայնքապետարանի հայտարարությունների տախտակի վրա և առցանց: • Աշխատատեղերի լավագույն թեկնածուներն ընտրվում են բաց մրցույթների արդյունքում: • Աշխատակիցների կատարողականը գնահատվում է ամեն տարի: 	<ul style="list-style-type: none"> • Համայնքապետարանն ունի կադրերի մասնագիտական զարգացման լավ ավանդույթներ: 	
Վկայություններ					Առաջարկություններ, նշումներ

4. Հաշվետվողականություն 4.1. Համայնքի բյուջեի քննարկումներ					
Հանրային քաղաքականության հիմնական որոշումները կայացվում են համայնքային բյուջետավորման գործընթացի ընթացքում, ուստի սա կարևոր հնարավորություն է քաղաքացիների նշանակալից մասնակցության համար:					
Դեռ չի մշակվել (1)	Սկսնակ (2)	Զարգացող (3)	Փորձառու (4)	Միավորներ	
4.1Ա	Համայնքային բյուջեի հանրային քննարկման ընթացակարգը դեռևս չի մշակվել:	Բյուջեի հանրային քննարկման ընթացակարգը և համապատասխան այլ փաստաթղթերը մշակման ընթացքում են:	Բյուջեի հանրային քննարկման կարգը մշակվել և հաստատվել է: Ընթացակարգի հանրային քննարկում է անցկացվել:	Գործող ընթացակարգը ամրապնդում է համայնքի մասնակցությունը բյուջետավորման գործընթացի բոլոր փուլերում:	
4.1Բ	Համայնքապետարանի ֆինանսական պատասխանատուն չի խրախուսում բնակչության մասնակցությունը համայնքի բյուջետավորման գործընթացում:	Համայնքում երբեմն բյուջեի հանրային քննարկում են անցկացվում, բայց համայնքի ֆինանսիստները բյուջեի քննարկման վերաբերյալ դասընթացներ չեն անցել:	Համայնքապետարանի աշխատակիցները բյուջեի քննարկման վերաբերյալ խորացված վերապատրաստում են անցել:	Համայնքապետարանի վերապատրաստված աշխատակիցներն աշխատում են բնակիչների, նախաձեռնող խմբերի և լրատվամիջոցների հետ՝ բյուջեի քննարկման նախապատրաստման և իրականացման փուլերում ու արդյունավետորեն ապահովում հետադարձ կապը բնակիչների հետ:	
4.1Գ	ՏԻՄ-երը չեն կարևորում բնակիչների կարծիքը բյուջետավորման գործընթացում:	Որոշ դեպքերում ՏԻՄ-երը բնակիչների կարծիքը հաշվի են առնում բյուջետավորման որոշ փուլերում:	Բնակիչները մասնակցում են բյուջեի հանրային քննարկումներին: ՀԿ-ները կամ նախաձեռնող խմբերը աջակցում են համայնքապետարանին՝ հանրային քննարկումների գործընթացում: Համայնքի համացանցային կայքը և լրատվամիջոցները կանոնավոր կերպով լուսաբանում են նախորդ տարվա կատարողականը, բյուջեի նախագիծը, համայնքի առաջնահերթությունները և հանրային քննարկման ամբողջ ընթացքը:	Բնակիչները ակտիվորեն են մասնակցում բյուջեի հանրային քննարկումներին: Գործում են շահակիցների խմբեր՝ ըստ մասնագիտությունների, տարիքի, սեռի, սոցիալական և տնտեսական խոցելիության և այլն: Համայնքապետարանը պարբերաբար բնակիչների հարցումներ է անցկացնում: Բյուջեի հանրային քննարկման գործընթացը խթանում է բնակիչների մասնակցությունը որոշումների կայացման մեջ և բարձրացնում նրանց վստահությունը ՏԻՄ-երի հանդեպ:	
• Օրինակներ	• Բյուջեի հանրային քննարկումներ չեն կազմակերպվում:	• Համայնքում իրականացվել է մեկ կամ երկու բյուջեի հանրային քննարկում, բայց բնակչության զգալի մասը հետաքրքրություն չի դրսևորել:	• ՀԿ-ները կամ նախաձեռնող խմբերը տեղեկատվություն են տարածում հանրային քննարկումների վերաբերյալ: • Բնակչության տարբեր խմբեր իրենց առաջարկություններով են ներկայանում բյուջեի հանրային քննարկմանը:	• Բնակչությունը ուշադրությամբ է հետևում և ակտիվորեն մասնակցում համայնքի առաջնահերթ խնդիրների լուծման և զարգացման հեռանկարների քննարկմանը, բյուջեի պլանավորմանը և կատարմանը:	
• Վկայություններ					• Առաջարկություններ, նշումներ

4.2. Տարեկան հաշվետվություններ
 Տեղական ինքնակառավարման տարեկան հաշվետվությունը հանրային հաղորդակցության գործիք է: Այն ավելի լայն տեղեկատվություն է տրամադրում ՏԻՄ-երի իրականացված գործունեության և մատուցվող ծառայությունների վերաբերյալ և հարկատուներին, համայնքի բնակիչներին և ավելի լայն հասարակությանը հնարավորություն է տալիս գնահատելու թե ինչպես են տեղական իշխանությունները տնօրինել համայնքային միջոցները և ՏԻՄ-երի գործառնությունների արդյունավետությունն ու ծախսարդյունավետությունը:

Գեո չի մշակվել (1)	Մկնասկ (2)	Զարգացող (3)	Փորձառու (4)	Միավորներ	
4.2Ա	Տարեկան հաշվետվությունների ներկայացման և քննարկման ընթացակարգը դեռևս չի մշակվել:	Տարեկան հաշվետվությունների ներկայացման և քննարկման ընթացակարգը մշակվում է:	Տարեկան հաշվետվությունների ներկայացման և քննարկման կանոնները մշակվել և հաստատվել են: Ընթացակարգի հանրային քննարկում է անցկացվել:	Գործող ընթացակարգը ամրապնդում է համայնքի բնակիչների արձագանքը տարեկան հաշվետվությունների վերաբերյալ:	
4.2Բ	Համայնքապետարանը չունի աշխատակիցներ համապատասխան հաղորդակցություն կազմակերպման համար:	Համայնքում երբեմն բյուջեի տարեկան հաշվետվությունների հանրային քննարկում է անցկացվում, բայց աշխատակիցները համապատասխան դասընթացներ չեն անցել:	Համայնքապետարանի աշխատակիցները մասնակցել են հանրային հաղորդակցության դասընթացի: Հաշվետվությունների հանրային քննարկումներն արդյունավետ են:	Ակտիվորեն աշխատելով բնակիչների, նախաձեռնող խմբերի և լրատվամիջոցների հետ, համայնքապետարանի վերապատրաստված աշխատակիցները կազմակերպում ՏԻՄ-երի տարեկան հաշվետվության ներկայացումն ու քննարկումը և ապահովում բնակիչների հետ հետադարձ կապը:	
4.2Գ	ՏԻՄ-երը չեն ներկայացնում իրենց տարեկան հաշվետվությունները համայնքի բնակչությանը:	ՏԻՄ-երը սկսել են բնակիչների հետ քննարկել տարեկան հաշվետվությունները:	Բնակիչները ակտիվորեն են մասնակցում են ՏԻՄ-երի հաշվետվությունների քննարկումներին: ՀԿ-ները կամ նախաձեռնող խմբերը աջակցում են հանդիպումների անցկացմանը: Համայնքի համացանցային կայքը և լրատվամիջոցները լուսաբանում են գործընթացը:	Տարեկան հաշվետվությունները պարունակում են մատուցված ծառայությունների ծախսերի, արդյունքների, արդյունավետության և ազդեցության երկարաժամկետ միտումների վերլուծությունը: Բնակիչները ակտիվորեն են մասնակցում հաշվետվությունների քննարկումներին: Այդ գործընթացը բարձրացնում նրանց վստահությունը ՏԻՄ-երի հանդեպ:	
<ul style="list-style-type: none"> Տարեկան հաշվետվությունների հանրային լուսնարկումներ չեն կազմակերպվում: 	<ul style="list-style-type: none"> Համայնքում իրականացվում են տարեկան հաշվետվությունների քննարկումներ, բայց բնակչության զգալի մեծամասնությունը հետաքրքրված չէ և չի մասնակցում: 	<ul style="list-style-type: none"> ՀԿ-ները կամ նախաձեռնող խմբերը տեղեկատվություն են տարածում տարեկան հաշվետվությունների քննարկումների վերաբերյալ: ՏԻՄ-երի հաշվետվությունները ներկայացվում և քննարկվում են լրատվամիջոցների հաղորդումներում: 	<ul style="list-style-type: none"> Բնակչությունը ուշադրությամբ է հետևում և մասնակցում է ՏԻՄ-երի հաշվետվությունների հանրային քննարկմանը: ՏԻՄ-երի հաշվետվությունների մեջ օգտագործվում են գրաֆիկներ, դիագրամներ և դյուրընկալ այլ տեսողական միջոցներ: Հաշվետվությունները առկա են համայնքի համացանցային կայքում: Համայնքապետարանի մասնագետներն արձագանքում են բնակիչների դիտողություններին և մեկնաբանություններին: 		
<ul style="list-style-type: none"> Օրինակներ 					
<ul style="list-style-type: none"> Վկայություններ 				<ul style="list-style-type: none"> Առաջարկություններ, նշումներ 	

4.3. Հաղորդակցություն և համագործակցություն այլ համայնքների, կենտրոնական իշխանության, տեղական և արտերկրի կազմակերպությունների և այլ շահակիցների հետ

Փորձի փոխանակման միջոցով ապակենտրոնացված համագործակցությունն օգնում է զարգացնել ՏԻՄ-երի փորձառությունը տեղական հանրային ծառայությունների կառավարման, ենթակառուցվածքների ստեղծման, քաղաքաշինության, տրանսպորտի, զբոսաշրջության, էլեկտրոնային կառավարման և համայնքային զարգացման այլ ոլորտներում: Այն նաև աջակցում է զլոբալ խնդիրների և մարտահրավերների դիմակայելուն, երբ հաճախ անհրաժեշտ են տեղական մոտեցումներ՝ դեմոկրատական կառավարում, կայուն զարգացում, կլիմայի փոփոխություն, մատուցվող ծառայությունների բարելավում և սոցիալական ու տնտեսական նորարարական նախաձեռնություններ:

	Դեռ չի մշակվել (1)	Մկսնակ (2)	Զարգացող (3)	Փորձառու (4)	Միավորներ
4.3Ա	Արտաքին կապերի քաղաքականություն չի մշակվել:	Արտաքին կապերի քաղաքականությունը մշակման փուլում է: ՏԻՄ-երի շահակիցների վերլուծություն դեռևս չի իրականացվել:	Արտաքին կապերի քաղաքականությունը մշակվել և հաստատվել է: Իրականացվել է ՏԻՄ-երի շահակիցների վերլուծություն/ քարտեզավորում:	Արտաքին հարաբերությունների գործող քաղաքականությունը համայնքի համար նոր ռեսուրսների ներգրավման հնարավորություններ է ստեղծում:	
4.3Բ	Համայնքապետարանը չունի արտաքին կապերի բաժին կամ համապատասխան աշխատակիցներ:	Համայնքապետարանն ունի արտաքին կապերի աշխատակիցներ, բայց նրանք համապատասխան վերապատրաստում չեն ստացել:	Համայնքապետարանի աշխատակիցները վերապատրաստվել են արտաքին կապերի ոլորտում:	Ակտիվորեն աշխատելով բնակիչների, նախաձեռնող խմբերի և լրատվամիջոցների հետ, համայնքապետարանի վերապատրաստված աշխատակիցները մշակում և իրականացնում են արտաքին համագործակցության ծրագրեր և այլ միջոցառումներ:	
4.3Գ	ՏԻՄ-երը չեն համագործակցում դոնորների և ՀԿ-ների հետ:	ՏԻՄ-երը սկսել են համագործակցել դոնորների և ՀԿ-ների հետ:	Համայնքապետարանը համագործակցում է կառավարական կառույցների հետ, կապ է հաստատել Հայաստանի և արտերկրի այլ համայնքապետարանների հետ և որոշ ծրագրեր են իրականացվում տեղական ու արտասահմանյան դոնորների ու ՀԿ-ների հետ:	Համայնքապետարանը արդյունավետորեն համագործակցում է կառավարական կառույցների, Հայաստանում և արտերկրում ունի բազմաթիվ գործընկեր համայնքապետարաններ, դոնորներ և ՀԿ-ներ:	
• Օրինակներ	• Անցյալում համայնքապետարանը համագործակցել է որոշ դոնորների կամ ՀԿ-ների հետ:	• Համայնքապետարանը համագործակցում է որոշ դոնորների կամ ՀԿ-ների հետ, բայց այդ համագործակցությունը կարճաժամկետ է և ոչ շարունակական:	• Փոխըմբռնման և համագործակցության հուշագրեր են ստորագրվել և իրականացվում են ծրագրեր՝ պետական կառույցների, Հայաստանի և արտերկրի այլ համայնքապետարանների հետ, դոնորների ու ՀԿ-ների հետ համատեղ:	• Համայնքապետարանն ունի տարբեր շահակիցների հետ երկարաժամկետ ծրագրերի իրականացման փորձ: • Համայնքապետարանի համագործակցության փորձը օրինակ է ծառայում հարևան համայնքների համար:	
• Վկայություններ					
					• Առաջարկություններ, նշումներ

5. Ռազմավարություն					
5.1. Տեսլական					
Տեսլականը գործնական ուղեցույց է ռազմավարական պլաններ կազմելու, նպատակներ դնելու, որոշումներ կայացնելու և ցանկացած մեծ կամ փոքր ծրագիր մշակելու, իրականացնելու և գնահատելու համար: Տեսլականը ՏԻՄ-երին օգնում է ներգրավել և համակարգել բնակչության ու այլ շահակիցների ներդրումը իրենց գործունեության` հատկապես բարդ խնդիրների լուծման և մեծ ծրագրերի իրականացման ընթացքում:					
Դեռ չի մշակվել (1)	Մկնակ (2)	Զարգացող (3)	Փորձառու (4)	Միավորներ	
5.1Ա	Համայնքի տեսլականը դեռ չի ձևակերպվել:	Համայնքի տեսլականի հայտարարությունն առկա է, բայց տեսլականի ձևավորման վերաբերյալ որևէ ընթացակարգ դեռևս չի մշակվել:	Համայնքի տեսլականի և զարգացման ռազմավարության մշակման ընթացակարգերը մշակվել, քննարկվել և հաստատվել են ավագանու կողմից:	Համայնքի տեսլականի հայտարարությունը կանոնավոր կերպով օգտագործվում է ռազմավարական պլանավորման ընթացքում և երկարաժամկետ ծրագրեր մշակելիս: Այդ ընթացակարգն ամրագրված է ավագանու որոշմամբ:	
5.1Բ	Համայնքի տեսլականը չի ձևակերպվել քանի որ համայնքապետարանը չունի մասնագետ, որը կարող է զբաղվել այդ հարցով:	Մեկ կամ երկու անձանց կողմից ձևակերպված տեսլականը լիովին չի արտացոլում այն ընդհանուր պատկերը, թե ինչպիսին են բնակիչները տեսնում իրենց համայնքը 10-15 տարի հետո:	Համայնքապետարանի ռազմավարական պլանավորման մասնագետը կազմակերպում է տեսլականի մշակման և վերանայման մասնակցային գործընթացը:	Համայնքապետարանի ռազմավարական պլանավորման թիմի անդամները վերապատրաստվել և պարբերաբար օգնում են այլ համայնքներին պլանավորել և իրականացնել մասնակցային գործընթացներ:	
5.1Գ	ՏԻՄ-երի աշխատակիցները չեն կարևորում տեսլականի մշակումը:	Համայնքի տեսլականը մշակվել է, բայց ՏԻՄ-երի աշխատակազմի մեծ մասը, բնակիչները, հասարակական կազմակերպությունները և այլ շահակիցները անտեղյակ են այդ մասին:	Մասնակցայինորեն մշակված համայնքի տեսլականը երբեմն օգտագործվում է ռազմավարական պլաններ կամ երկարաժամկետ ծրագրեր մշակելիս: ՏԻՄ-երի աշխատակիցները և որոշ ակտիվ բնակիչները գիտեն, իսկ արտաքին աշխարհը կարող է ծանոթանալ այդ տեսլականին համայնքի կայքից և ՏԻՄ-երի կամ լրատվամիջոցների հրապարակումներից:	Համայնքի տեսլականի հայտարարությունը մշակվում է համատեղ` բնակիչների, ընտրված պաշտոնյաների և շահակիցների հետ ու այն ոգեշնչում է նրանց միասին աշխատել իրենց տեսլականին հասնելու համար: Տեսլականի հայտարարությունը առկա է համայնքի կայքում: Այն օգտագործվում է պարբերաբար վերանայվում է համայնքի զարգացման ռազմավարական պլանավորման մասնակցային գործընթացում:	
• Օրինակներ	• Որոշ փորձեր արվել են, բայց տեսլականը դեռ չի ձևակերպվել:	• Տեսլականի մշակմանը չեն ներգրավվել համայնքի մտավորականության, հասարակական կազմակերպությունների, մասնավոր հատվածի ներկայացուցիչներ կամ այլ շահակիցներ:	• Համայնքի տեսլականի մշակման գործընթացի մասնակիցները բարձր են գնահատել աշխատանքի կազմակերպումն ու արդյունքները: • Լրատվամիջոցները լուսաբանել են ընթացքը: • Տեսլականի հայտարարությունն օգտագործվել է երկարաժամկետ ծրագրեր մշակելիս:	• Համայնքի տեսլականի հայտարարությունը վերանայվել է մի քանի անգամ` համայնքի զարգացման ռազմավարական պլանավորման գործընթացում, այդ մասին արձանագրությունները տեղադրված են համայնքի կայքում: • Հաշվի առնելով գործընթացի փորձը` պարբերաբար լրամշակվում է նաև տեսլականի հայտարարության ձևավորման և վերանայման ընթացակարգը:	
• Վկայություններ					• Առաջարկություններ, նշումներ

5.2. Ռազմավարական պլանավորում և համայնքային զարգացման ծրագրեր					
5	Համայնքի զարգացման ռազմավարությունը համայնքի կառուցման և իր բնակիչների կյանքի բարելավման հիմքն է: Ռազմավարության իրականացման արդյունքում համայնքներն ուժեղանում են, հաղթահարելով ծագած խնդիրները, նոր ձեռնարկություններ են ստեղծում և զարգացնում տաղանդավոր մասնագետներ ներգրավելու իրենց ունակությունը:				
	Դեռ չի մշակվել (1)	Մկննակ (2)	Զարգացող (3)	Փորձառու (4)	Միավորներ
5.2Ա	Համայնքային զարգացման ռազմավարություն դեռևս է: չի մշակվել:	Համայնքային զարգացման ռազմավարությունը մշակվում է:	Համայնքային զարգացման ռազմավարությունը մշակվել է մասնակցային գործընթացով: Իրականացվել են հանրային քննարկումներ:	Համայնքային զարգացման ռազմավարությունը մշակվում և պարբերաբար վերանայվում է համայնքի բնակիչների, ՀԿ-ների, ՁԼՄ-ների, մասնավոր հատվածի և այլ շահակիցների ներկայացուցիչների մասնակցությամբ:	
5.2Բ	Համայնքապետարանը չունի ռազմավարության մշակման մասնագետներ:	Համայնքապետարանն ունի ռազմավարության մշակման պատասխանատուներ, բայց նրանք համապատասխան վերապատրաստում չեն ստացել:	Համայնքապետարանի համապատասխան աշխատակիցները մասնակցել են ռազմավարության մշակման վերաբերյալ վերապատրաստման դասընթացների:	Ակտիվորեն համագործակցելով բնակիչների, նախաձեռնող խմբերի և լրատվամիջոցների հետ, ՏԻՄ-երը վարում են համայնքի զարգացման ռազմավարության մշակման մասնակցային գործընթացն ու ռազմավարական նպատակների իրականացման հաշվետվությունների ներկայացումն ու քննարկումը:	
5.2Գ	Համայնքային զարգացման ռազմավարության մշակման գործընթաց չի կազմակերպվել:	Համայնքային զարգացման ռազմավարության մշակման գործընթացին մասնակցում են որոշ շահակիցների ներկայացուցիչներ:	Համայնքի բնակիչները մասնակցում են համայնքի զարգացման ռազմավարության մշակման գործընթացին: ՀԿ-ները կամ նախաձեռնող խմբերը աջակցում են քննարկումների կազմակերպմանը: Համայնքի կայքը և լրատվամիջոցները լուսաբանում են գործընթացը:	Համայնքի բնակիչները ակտիվորեն են մասնակցում են համայնքի զարգացման ռազմավարության մշակման գործընթացին և նպատակների իրականացման մասին հաշվետվությունների հանրային քննարկումներին: Այդ գործընթացը խթանում է բնակիչների մասնակցությունը որոշումների կայացման մեջ և բարձրացնում նրանց վստահությունը ՏԻՄ-երի հանդեպ:	
• Օրինակներ	<ul style="list-style-type: none"> Համայնքի բնակիչները տեղյակ չեն համայնքային զարգացման ռազմավարության մասին: 	<ul style="list-style-type: none"> Համայնքապետարանի աշխատակիցները տեղեկացնում և հրավիրում են որոշ բնակիչների և շահակիցների՝ մասնակցելու ռազմավարության մշակման գործընթացին: 	<ul style="list-style-type: none"> Նախաձեռնող խմբերը և լրատվամիջոցները հետևում են ռազմավարության մշակման և իրականացման գործընթացներին: 	<ul style="list-style-type: none"> Համայնքի բնակիչները, ՀԿ-ները, ՁԼՄ-ները, մասնավոր հատվածի և այլ շահակիցների ներկայացուցիչները ակտիվորեն են մասնակցում ռազմավարության մշակմանը և հետևում համայնքային զարգացման ծրագրերի իրականացմանը: ՁԼՄ-ները լուսաբանում են գործընթացը: 	
• վկայություններ					• Առաջարկություններ, նշումներ

5	5.3. Ներհամայնքային համագործակցություն Ներհամայնքային համակարգումն օգնում է համայնքի բնակավայրերի առաջնահերթությունների հստակեցմանը խթանում էն համայնքի համաչափ զարգացումը:				
	Դեռ չի մշակվել (1)	Սկսնակ (2)	Զարգացող (3)	Փորձառու (4)	Միավորներ
5.3Ա	Ներհամայնքային համագործակցության քաղաքականությունը չի մշակվել:	Ներհամայնքային համագործակցության քաղաքականությունը մշակվում է:	Ներհամայնքային համագործակցության քաղաքականությունը մշակվել և հաստատվել է: Իրականացվել են հանրային քննարկումներ:	Ներհամայնքային համագործակցության արդյունավետորեն իրականացվող քաղաքականությունը համայնքի բոլոր բնակավայրերի համար առաջնահերթությունների հստակեցման և նոր ռեսուրսների ներգրավման հնարավորություններ է ստեղծում:	
5.3Բ	Համայնքապետարանը չունի ներհամայնքային համագործակցության համար պատասխանատու աշխատակիցներ:	Համայնքապետարանն ունի ներհամայնքային համագործակցության պատասխանատուներ, բայց նրանք համապատասխան վերապատրաստում չեն ստացել:	Համայնքապետարանի աշխատակիցները մասնակցել են ներհամայնքային համագործակցության վերաբերյալ վերապատրաստման դասընթացների:	Ակտիվորեն աշխատելով համայնքի բոլոր բնակավայրերի բնակիչների, նախաձեռնող խմբերի և լրատվամիջոցների հետ, համայնքապետարանի վերապատրաստված աշխատակիցները կազմակերպում են բնակավայրերի խնդիրների և առաջնահերթությունների հանրային քննարկումներ և ապահովում բնակիչների հետ հետադարձ կապը:	
5.3Գ	ՏԻՄ-երի համագործակցությունը բնակավայրերի հետ անկանոն է: Որոշ հանրային ծառայություններ որոշ բնակավայրերում հնարավոր չէ մատուցել:	ՏԻՄ-երը ուշադրություն են դարձնում միավորված համայնքի բնակավայրերի որոշ խնդիրների լուծմանը:	Համայնքի բոլոր բնակավայրերի խնդիրները ՏԻՄ-երի ուշադրության են արժանանում և լուծվում՝ ըստ առաջնահերթության: Բոլոր բնակավայրերի բնակիչները հնարավորություն ունեն մասնակցելու տեղական ինքնակառավարման որոշումների կայացմանը:	Համայնքապետարանը արդյունավետորեն է անդրադառնում բոլոր բնակավայրերի խնդիրներին: Միավորված համայնքի բոլոր բնակավայրերի բնակիչները ակտիվորեն են մասնակցում տեղական ինքնակառավարման որոշումների կայացմանը:	
• Օրինակներ	<ul style="list-style-type: none"> • ՏԻՄ-երի համագործակցությունը բնակավայրերի հետ սահմանափակվում է անկանոն այցերով: • Հանրային ծառայությունների մեծ մասը մատուցվում է համայնքային կենտրոնում և տրանսպորտի սակավության պատճառով հասանելի չեն որոշ բնակավայրերի 	<ul style="list-style-type: none"> • Թեև որոշ հանրային ծառայությունների մատուցումը իրականացվում է համայնքային կենտրոնում, համայնքապետարանը այդ ծառայությունները համայնքի բոլոր բնակիչներին հասանելի դարձնելու համար: 	<ul style="list-style-type: none"> • ՏԻՄ-երը կանոնավոր կերպով այցելում են համայնքի բոլոր բնակավայրերը և հանդիպում բնակչության հետ: • Հանրային ծառայությունները հասանելի են միավորված համայնքի գրեթե բոլոր բնակիչներին: 	<ul style="list-style-type: none"> • Միավորված համայնքի բոլոր բնակավայրերը զարգանում են համաչափորեն: • Համայնքապետարանի փորձը օրինակ է ծառայում հարևան համայնքների համար: 	
• Վկայություններ					<ul style="list-style-type: none"> • Առաջադիմություններ, նշումներ

համայնք՝


գնահատման ամսաթիվ՝

Գնահատման սանդղակ.

- 4** Կոմպետենտ
- 3** Զարգացող
- 2** Սկսնակ
- 1** Դեռ չի մշակվել
- Ո/Կ** Անկիրառելի

նորմատիվ
կատուցվածքային
գործառական

- 1 Մասնակցայնություն
- 2 Ներառականություն
- 3 Թափանցիկություն
- 4 Հաշվետվողականություն
- 5 Ռազմավարություն



առաջարկություններ.